



ՀԵՌԱԿԻՐՆԵՐ

Երևան, 1 Մարտ 1955

Սենեկապետ

Ն. Վ. Հիսեյն Քալաուրի

Ամման

Նորին Վեհափառութեան նշանախօսութեան բարեբաւսիկ առիթով կը ներկայացնենք մեր Միաբանութեան եւ Հայ նամակների շնորհաւորութիւնները եւ յաջողութեան ու երջանկութեան ջերմ մաղրանքներ:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ԲԷՄՄԱՆՆԵՐ

Վասն Պատր. Տեղապահի Ս. Արսուր

Արմաւիր, 2 Մարտ 1955

Նորին Գերաւանդութիւն

Սուրեն Եպս. Քեմհանեան

Երևան

Ճնորհակալ եմ Ձեր ազնիւ շնորհաւորութիւններուն եւ մաղրանքներուն համար:

ԱՂ - ՀԻՒՍԷՅՆ



ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄՄԱՆՆԵՐ

● Դշ. 2 Մարտ. — Սիկիւրն կարգաց Մեծի պապի: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Վերահաղախի առաջին հանդիսաւոր կարգը:

● Եշ. 3 Մարտ. — Երեկոյեան, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Մեծ պահոց «Եկեացէք» խառն ժամերգութիւնը, որու ընթացքին քարոզեց հանդիսապետ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեան, ընթացքին ունենալով «Եւ եմ հանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք» (Յովհ. ԺԳ. 6): Գեր. Քարոզիչը բացատրեց հաւատացեալներուն ազդաշնորհութեան կարեւորութիւնն ու պահեցողութեան բարեբար ազդեցութիւնը մեր կեանքին վրայ, մանաւանդ այս օրերուն: Հաստատեց նաեւ այն իրողութիւնը թէ լայն կամ հանգստաւէտ համբանները զէպի անդունդ կ'առաջնորդեն, մինչ անձեկ հանապարհը կը տանի մեզ երանութեան ու փառքի: Եւ այդ համբանն ուղիներն Տէր Յիսուս Քրիստոսն է: Ան ցոյց տուաւ մեզի փրկութեան համբան իբրեւ ազդեցոյց անսահման սիրտ, վասն զի նա ոչ կամի զմահ մեղաւորին, այլ զղառնալի նորա ի շար հանապարհէն եւ զկեանքէն:

● Աւր. 4 Մարտ. — Վաղուան նախատեսակին ի Ս. Թորոս նախադասեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պապեան:

● Եր. 5 Մարտ. — Ս. Թեոփրոսի զօրավարին: Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մատուցուեցան ի Ս. Թեոփրոս: Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան:

— Կէսօրէ ետք շարադասութեամբ մուտք ի Ս. Յարութիւն, նախադասութեամբ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեանի, Կիրակոսից ժամերգութիւնն ու նախատեսակը պաշտուեցան Տաճարի մեր վերահամարան մէջ, նախադասութեամբ Նորին Գերապատուութեան:

● Կիր. 6 Մարտ. — Արամման: Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մատուցուեցան ի Ս. Յարութիւն, Բ. Գողգոթայի մեր վերահամարան մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչիւնեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երթադարձ մեծահանդէս թափուր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ սպա Պատանաւորացի շուրջ, նախադասութեամբ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեանի:

● Եշ. 10 Մարտ. — Իրիկուան «Եկեացէք» նախադասեց եւ քարոզեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պապեան, ընթացքին ունենալով «Տէր, լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց» (Սաղմ. ԻԶ. 1), Սաղմոսերգութիւն յիշուր լոյսը սուրբական լոյսը չէր, այլ հոգեւոր լոյսը: Երբ մարդ զօրեղ է այդ լոյսէն, չկրնար հոգեկան զեղեցիկ յատկութիւններ նշմարել այլոց մէջ, ինչպէս կոյր մը ոչինչ կրնայ տեսնել երեւութեան զեղեցիկութիւններէն: Այդ լոյսը կը ներդաշնակէ մեր կեանքը եւ ցոյց կուտայ մեզ փրկութեան համբան: Ով որ կենդանութեան սիրէ այդ լոյսը եւ ունենայ զայն միշտ, այդ լոյսը մահէն ետք ալ պիտի մնայ իր մէջ անբաժան: Իսկ անոնք որ իրենց կենդանութեան կ'անտեսեն զայն, կը մնան միշտ խաւարի մէջ:

● Եր. 12 Մարտ. — Ս. Կիւրղի Երանապիմայ հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւանդատան Ս. Կիրիլի սեղանին վրայ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Վարուժան Վրդ. Գապարահեան: Ապա Մայր Տաճարի գաւիթը, Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեանի նախադասութեամբ կատարուեցաւ հանդիսաւոր պաշտամունք, երանաշնորհ Տ. Կիրիլի Պատարագը Հօր հոգեւոյն ի հանգիստ, անոր անուան տունին առթիւ:

● Կիր. 13 Մարտ. — Ամառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Պատարագիչն էր Հոգ. Տ. Գէորգ Արդ. Նազարեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արարամեան, ընթացքին ունենալով օրուան ծառն Աւետարանէն «Զի եղբայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց, կուրուեսալ էր՝ եւ գտուաւ» (Ղուկ. ԺԵ. 32): Շնչուեց մարդը Աստուծոյ հեռացնող նիւթին կորստաբեր հանգամանքը: Անտառի որդին չկրցաւ խելամախի եւ զարթի գալ, մինչեւ այն րոպէն երբ զերծ մնաց նիւթին կաշկանդիչ զօրութիւնէն: Մենք ալ յուսահատութեան ատեն կ'որոշենք զարթի գալ, Սակայն պէտք է միշտ արթնուն ըլլալ ու ազօթել:

● Եշ. 17 Մարտ. — Իրիկուան «Եկեացէք» կարգին քարոզեց Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան, ընթացքին ունենալով «Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ ճշմարտութիւն ի

Տեան Յիսուսի Քրիստոսի եղեն (Յովհ. Ա. 17),
 Հոգ. Հայրապետը ցոյց տուաւ Օրէնքին անհրա-
 ժեշտութիւնը մարդոց համար և աւելցուց որ
 Օրէնքէն առաջ և Օրէնքէն վեր, պէտք է կատա-
 րելութեան ձգտիլ, ունենալով ներքին ճանաչո-
 ւածութիւն: Երբ մարդիկ ճշմարտութեան հետ ըլ-
 լան և ապրին աստուածային շնորհով, այն ատեն
 իրեն Աստուծոյ որդիներ, Անոր թագաւորութեան
 իսկական ժառանգորդները կ'ըլլան, արժանանա-
 լով յաւիտեանական կեանքի երանութեան: Հոգ.
 Հայրը բացատրելէ ետք շնորհքին ներքին արժե-
 քը, յիշեց Յիսուսի պատգամը որ կ'ըսէ «Ես եկի
 զի զկեանս ունիցին. և առաւել ևս ունիցին»:

● Կիր. 20 Մարտ. — Տնտեսի: Փակեալ-խո-
 բանի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տա-
 հաբին մէջ, Պատարագիչն էր Հոգ. Տ. Հայկազուն
 Վրդ. Աբրահամեան:

● Եւ. 24 Մարտ. — Իրիկուան «Եկեղեցի»
 կարգին քարոզիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ.
 Աբրահամեան, «Եմաստութիւն Հօր Յիսուս...»
 ընթարանով: Հոգ. քարոզիչը ցոյց տուաւ քարին
 խորհելու, խոսելու և զործելու միջոցներն ու
 առաւելութիւնները:

● Եր. 26 Մարտ. — Վաղուան Դատաւորաց
 Կիրակիի առթիւ, կէսօրէ ետք, Ամեն. Տեղապահ
 Ս. Հօր զխաւարութեամբ կատարուեցաւ «Հրա-
 շտապութիւն հանդիսաւոր մօտք ի Ս. Յարութիւն»,
 Կիրակուտքն ու վաղուան նախատեսակը պաշ-
 տուեցան Կիւտ իւսի ալրին կից՝ Ս. Լուսաւորիչ
 եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Նորին Ամե-
 նապատուութեան:

● Կիր. 27 Մարտ. — Դասաւորի: Առաւոտ-
 եան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Լուսա-
 ւորիչ, Կարճ դաղարէ մը ետք, Ամեն. Տեղապահ
 Ս. Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատա-
 րագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և նախա-
 զանց Ս. Գերեզմանին և Պատանաւորաց շուրջ
 կատարուած երրորդած մեծանդան թափօրին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Դի. 2 Մարտ. — Կէսօրէ առաջ, Ն. Վիհ.
 Հիւսէյն Թաղաւորի նշանախօսութեան առթիւ,
 Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմանեան, Հոգ. Տ. Հայ-
 կազուն Վրդ. Աբրահամեան և Տիար Կ. Հինդլեանի,
 շնորհաւորութեան զանգի վանք. Մուծասարեֆին:

● Կիր. 6 Մարտ. — Երեկոյեան, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, որ 16 փետր. Ներկայտու մեկ-
 նած էր, վերադարձաւ Ս. Աթոռ, Գեր. Սրբազանը
 Ս. Երուսաղէմի Տնօրինական Սրբափայտեղէն տա-
 րա մեր տիբելի ժողովուրդին հոգևոր մխիթա-
 րութիւն. քարոզեց այնտեղ. Մեծ Պահքի խոր-
 հուրիչ շուրջ, իր խօսքին սովորական ձևով:

● Բշ. 7 Մարտ. — Առաւոտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հօր այցելեց տեղւոյն Օսմանեան

զրամատան Նոր Տնօրէն Mr. G. S. Pictou.

● Եւ. 10 Մարտ. — Երեկոյեան, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւանեսեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 ներկայ գտնուեցաւ Թրքական Հիւպատոսարանի
 մէջ տրուած Cocktail partyին:

● Բշ. 14 Մարտ. — Առաւոտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հօր այցելեց քաղաքի Սէուտական
 Արարիոյ Նորնորի Հիւպատոսը:

● Գշ. 15 Մարտ. — Առաւոտուն, Ֆրանսայի
 Կրթական Նախարարութեան Abbé Jules Leroy
 այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր.
 Տ. Սուրէն Եղս. Քէմանեանի կողմէ: Յաջորդ
 օրերուն այցելեց Ս. Աթոռոյ Զեռագրատունը,
 ուսումնասիրելով հայկական մանրանկարները:

● Դշ. 16 Մարտ. — Առաւոտուն, Ս. Տեղեաց
 Նորնորի Գայմազամ Տիար Խոյրաշիմ Թաքթաշ
 այցելեց Պատրիարքարան, իրեն կ'ընկերանար
 Ս. Տեղեաց Ստիկանապետ Սատրղ Էֆ. Կաղիֆ:

● Եւ. 17 Մարտ. — Երեկոյեան, Ն. Ս. Հոս-
 մայ Գիոս Ժի. Պապին գահակալութեան 16րդ տա-
 րեկարձին առթիւ, տեղւոյն Պապական Նախար.
 Կին կողմէ սարքուած ընդունուեցան ներկայ
 գտնուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմանեան,
 ընկերակցութեամբ Տիար Կարպիս Հինդլեանի:

— Նոյն ատեն, տեղւոյն Y. M. C. A. ի սրա-
 հին մէջ, Փարիզեան զաշնակահար Gilles Guilbert
 կողմէ, Ֆրանսական Հիւպատոսարանի հոլման.
 ւորութեան ներքեւ սարքուած զաշնակի նուս-
 զանդէսին ներկայ եղաւ Բար. Յովսէփ Սրկ.
 Մամուր:

● Ուր. 18 Մարտ. — Առաւոտուն, Պաղես-
 տինի ինամատար Կառավարութեան նախկին Ա.
 ազ Քարտուղար Sir Harry Luke այցելեց Մայր
 Տաճար և Պատրիարքարան, ուր ընդունուեցաւ
 Գեր. Տ. Սուրէն Եղս. Քէմանեանի կողմէ:

● Եր. 19 Մարտ. — Առաւոտուն, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւանեսեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 փոխ-այցելութիւն տուաւ Սէուտական Արարիոյ
 Նորնորի Հիւպատոսին և Ս. Տեղեաց Նորնորի
 Գայմազամին:

— Կէսօրէ ետք, տեղւոյն Centre Culturel
 կողմէ, St. Anne ի սահման մէջ, Ֆրանսական դես-
 պան R. P. Tournay O. P. Նախագահութեան
 ներքեւ տրուած Քրանսերէն Սաղմունքու մեկ-
 նութեան և վերձանումի դասախօսութեան ներ-
 կայ գտնուեցաւ Բար. Յովսէփ Սրկ. Մամուր:

● Եւ. 24 Մարտ. — Կէսօրէ ետք, Ամեն. Տե-
 ղապահ Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգ. Տ.
 Հայրիկ Վրդ. Աւանեսեանի և Տիար Կ. Հինդլեանի,
 ներկայ գտնուեցաւ American Colony-ի մէջ, Order
 of St. John-ի կողմէ, ի պատիւ իրենց նախագահ
 Sir Stewart-ի և Lady Duke-Elder-ի տրուած թէյա-
 սեղանին:

المدير والمحرر المسؤول - الآب هايكازون أبراهيان

العدد ٣

نصدها - بطريكية الارمن الارثوذكس

تطبع في مطبعة دير الارمن - القدس

مارس ١٩٥٥

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
 Editor - Father Haigazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
 Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.